



## ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ինչպե՞ս տեղադրել iAN TV հավելվածը  
Dune HD հաղորդող սարքերի վրա



iAN TV հավելվածը համադրելի է Dune HD TV-102 և Dune HD TV-102W հեռուստատեսային հաղորդող սարքերի հետ: Նշված սարքերի միջոցով կարելի է օգտվել iAN TV ծառայությունից՝ սարքերի վրա տեղադրելով և գործարկելով համապատասխան հավելվածը:




Այս ուղեցույցում ներկայացված են Dune HD TV-102 և Dune HD TV-102W հեռուստատեսային հաղորդող սարքերի համար iAN TV ծրագրային հավելվածի ներբեռնման, տեղադրման և գործարկման քայլերը:

# Քավելվածի ներբեռնում և տեղադրում

**Քայլ 1.** iAN TV-ի կայքից [ներբեռնեք](#) ծրագրային հավելվածի ZIP ֆայլը (նախընտրելի է ֆայլը պահել համակարգչի աշխատասեղանին):


**Քայլ 2.** Նշեք ZIP ֆայլը, սեղմեք մկնիկի աջ կոճակը և բացվող մենյուից ընտրեք «Extract Here»:



**Քայլ 3.** Միացրեք USB ֆլեշ-կրիչը համակարգչին:

**Քայլ 4.** Ֆայլը տեղափոխեք USB ֆլեշ-կրիչի վրա (ցանկալի է, որ USB ֆլեշ-կրիչը լինի դատարկ):  
Ուշադրություն` ֆայլի անվանումը անհրաժեշտ է թողնել նույնությամբ:

**Քայլ 5.** Անջատեք USB ֆլեշ-կրիչը համակարգչից:



**Քայլ 6.** Միացրեք Dune HD սարքը հեռուստացույցին HDMI հանգույցի կամ CVBS լարի միջոցով:

**Քայլ 7.** Հեռակառավարման վահանակի օգնությամբ միացրեք Dune HD սարքը (սարքի ծրագրային բեռնումը կարող է տևել մինչև 1 րոպե):

**Քայլ 8.** Հեռուստացույցի էկրանին բացվող մենյուից ընտրեք **սախընտրելի լեզուն**, TV Standard-ը (ըստ երկրների), Dune HD հաղորդող սարքի միացման տարբերակը, վիդեո-կարգավորումները և հաստատեք Ձեր ընտրությունը՝ սարքի ծրագրային բեռնումը ավարտելու համար:

**Քայլ 9.** Միացրեք USB ֆլեշ-կրիչը Dune HD հաղորդող սարքին:

**Քայլ 10.** Dune HD հաղորդող սարքի ծրագրի մենյուից մուտք գործեք «Sources» բաժին, ընտրեք «USB storage»-ը: Այստեղ կգտնեք iAN TV հավելվածը՝ *diff ֆորմատով*: Ընտրեք ֆայլը և սեղմեք «Upgrade»՝ հավելվածը հաղորդող սարքի վրա տեղադրելու համար:

Հավելվածի բեռնումը կարող է տևել մինչև 5 րոպե (*զգուշացում*՝ խորհուրդ է տրվում Dune HD սարքի ծրագրային թարմացումը իրականացնելու ժամանակ սարքի միացումը էլեկտրական հոսանքին ապահովել UPS-ի միջոցով: Էլեկտրական հոսանքի տատանումները կարող են սարքի խափանման պատճառ հանդիսանալ):

**Քայլ 11.** iAN TV հավելվածի բեռնումը ավարտվելուց հետո սեղմեք «Restart»՝ հավելվածը գործարկելու համար և հեռացրեք USB ֆլեշ-կրիչը Dune HD հաղորդող սարքից:

**Dune HD հաղորդող սարքի վրա iAN TV հավելվածը տեղադրելուց հետո Դուք կարող եք օգտվել ծառայությունից: Այն ակտիվացնելու համար մուտքագրեք Ձեր տվյալները:**



*Մաղթում ենք Ձեզ հաճելի դիտում*

www.iantv.tv  
support@iantv.tv  
+31266690012